ԵԴ2/12884/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հուլիսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 10.07.2023 թվականին (ըստ գործում առկա մակագրության թերթիկի այլ նշումներ բաժնում կատարված գրառման՝ հայցադիմումն առձեռն ստացվել է 07.07.2023թ.-ին) հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա. Օհանյան) 18.07.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 21.07.2023թ. կրկին ներկայացրել է հայցադիմումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Մ. Ստեփանյան) 27.07.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ թերությունները շտկելու և հայցադիմումը կրկին ներկայացնելու համար եռօրյա ժամկետի տրամադրմամբ:

Հայցադիմումի հիման վրա կազմված գործը 27.07.2023թ. մակագրվել է Դատարանի դատավոր Լ. Սաղոյանին, իսկ դատավորի աշխատակազմին է հանձնվել՝ 28.07.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու և որպես հետևանք գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ և համարել Դատարանի ներկայացված սկզբնական ներկայացման օրը:

Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին սեպտեմբերի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**